ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՆԳՀԾՁԲ-20/71

ք. Երևան « 11 »«հունիս» 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գևորգ Աղաբալյան» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Գ.Աղաբալյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միջոցառումների հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 (հինգ)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8200000 (Ութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գևորգ Աղաբալյան» Ա/Ձ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ք" Երևան Երվանդ Քոչար 23/77
Կառավարական տուն 2,	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ 16044033613101
Հ/Հ 900011032472	ՀՎՀՀ 30946476
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	
_____ **Վ. Գասպարյան**	_____ **Գ. Աղաբալյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«11» 06 2020թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժին	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը*
1	79951100/3	միջոցառումների հետ կապված ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է երիտասարդության օրվան նվիրված միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպում:** *Երիտասարդության միջազգային օրը՝ օգոստոսի 12-ին, Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում կկազմակերպվեն միջոցառումներ, իսկ ՀՀ 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք Կապանում համերգային միջոցառում:* *Երիտասարդության միջազգային օրը ՀՀ բոլոր մարզերում նշելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) իրականացնելու է միջոցառումների շարք ՀՀ բոլոր մարզերում: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Շիրակի մարզի Գյումրի, Գեղարքունիքի մարզի Գավառ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արմավիրի մարզի Արմավիր, Արագածոտնի մարզի Աշտարակ, Արարատի մարզի Արտաշատ, Լոռու մարզի Վանաձոր, Տավուշի մարզի Իջևան քաղաքներում կկազմակերպվեն փոնավաճառներ, իսկ ՀՀ 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք Կապանում մեծ համերգային միջոցառում:* *Միջոցառումն իրականացվելու է հետևյալ փուլերով՝* *1. ՀՀ 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքում համերգի կազմակերպում (այսուհետ՝ համերգային միջոցառում),* *2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Շիրակի մարզի Գյումրի, Գեղարքունիքի մարզի Գավառ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արմավիրի մարզի Արմավիր, Արագածոտնի մարզի Աշտարակ, Արարատի մարզի Արտաշատ,*	դրամ	1	8200000	8200000	2020 թվականի օգոստոսի 1-ից, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում մինչև 2020 թվականի օգոստոսի 13-ը:

			Լոռու մարզի Վանաձոր, Տավուշի մարզի Իջևան քաղաքներում փոնավաճառների կազմակերպում, Միջոցառման փուլերի անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին* համապատասխան:					

***Միջոցառման փուլերի անցկացման չափանիշներ**

1. ՀՀ 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքում համերգային միջոցառման կազմակերպում: Համերգային միջոցառումը կիրականացվի Կապան քաղաքի Գարեգին Նժդեհի անվան հրապարակում:

2020 թվականի օգոստոսի 12-ին Կապանի Գարեգին Նժդեհի անվան հրապարակում տեղի կունենա Երիտասարդության միջազգային օրվան նվիրված համերգային միջոցառումը, որին կմասնակցեն կապանցի երիտասարդներ և երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
Ողջույնի խոսքով հանդես կգան երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատուները, Կապան համայնքի ղեկավարը:
Այս ամենին կհաջորդի 60 րոպե տևողությամբ ռոք կամ էստրադային համերգային ծրագիրը:

Համերգային միջոցառման կազմակերպման շրջանակներում Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝

1.1 Համերգային ծրագիր

Համերգային ծրագրի կազմակերպում 60 րոպե տևողությամբ՝ էստրադային կամ ռոք խմբերի ընդգրկմամբ՝ հաղորդավարի առկայությամբ: Համերգային խմբիև հաղորդավարի ընտրությունը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

1.2 Լուսային համակարգ համերգի համար՝

- շարժական լույս BEAM R7 230WATT (կամ համարժեք) - 10 հատ,
- շարժական լույս LED WASH RGBW 30x12 WATT (կամ համարժեք) - 6 հատ,
- ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT (կամ համարժեք) - 4 հատ,
- թարթող լույսեր STROB 2000 WATT (կամ համարժեք) – 1 հատ,
- ստատիկ լույս PAR 64 (կամ համարժեք) - 4 հատ

1.3 Ձայնային սարքավորումների համակարգ Համերգային միջոցառման համար:

Ձայնային տեխնիկան պետք է համապատասխանի Կապանի Գարեգին Նժդեհի անվան հրապարակում կազմակերպվող էստրադային կամ ռոք խմբին անհրաժեշտ պարամետրերին

1.4 Բեմ՝ մետաղական կոնստրուկցիաներով և ծածկով - 1 հատ

Մետաղական կոնստրուկցիայի չափերը՝ (12,4 մ x 10 մ x 7 մ)

Բեմի չափերը - 1 հատ (12 մ x 9 մ x 1,2 մ)

1.5 Համերգային միջոցառման հյուրերի (ընդհանուր 20 մարդ) տեղափոխումը Երևան քաղաքից դեպի ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաք և հետադարձ:

Ուղևորափոխադրման ժամերը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ: Համերգային միջոցառման հյուրերի կոնտակները Ծառայություն մատուցող կազմակերպությանը կտրամադրի ԵՔ վարչությունը:

Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, փափուկ նստատեղերով, ապահովված բոլոր անհրաժեշտ սարքերով:

1.6 Համերգային միջոցառման հյուրերի (ընդհանուր 20 մարդ) կեցությունն ու սնունդը.

Կեցություն ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում (1 գիշեր).

գիշերակաց մեկտեղանոց՝ մեկ մահճակալով համարներում:

Սնունդ.

ճաշ ճանապարհին (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք)

ընթրիք (հաց, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ),

նախաճաշ (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, այուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ):

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Շիրակի մարզի Գյումրի, Գեղարքունիքի մարզի Գավառ, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Արմավիրի մարզի Արմավիր, Արագածոտնի մարզի Աշտարակ, Արարատի մարզի Արտաշատ, Լոռու մարզի Վանաձոր, Տավուշի մարզի Իջևան քաղաքներում տոնավաճառների կազմակերպում:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Շիրակի մարզի Գյումրի, Գեղարքունիքի մարզի Գավառ, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Արմավիրի մարզի Արմավիր, Արագածոտնի մարզի Աշտարակ, Արարատի մարզի Արտաշատ, Լոռու մարզի Վանաձոր, Տավուշի մարզի Իջևան քաղաքներում տոնավաճառների կազմակերպման շրջանակներում 2020 թվականի օգոստոսի 12-ին ապահովելու է՝

2.1 Յուրաքանչյուր մարզում տաղավարների առկայությունը:

Յուրաքանչյուր մարզում 5 մ x 5 մ (չորս կողմից փակվող վարագույրներով, տանիքի ծածկ երկշերտ պլաստիկե գործվածքով) 4-ական տաղավարներ՝ ապահովված 40 հատ սեղաններով, աթոռներով և սեղանի ծածկոցներով (Ծածկոցների գույնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ):

2.2 Յուրաքանչյուր մարզում 100 մարդու համար նախատեսված հյուրասիրության կազմակերպում.

Յուրաքանչյուր մարզում 100 մարդու համար հյուրասիրություն (քաղցրավենիք երեք տեսակի, յուրաքանչյուր տեսակից 100 կտոր,100 մարդու համար հյութ և ջուր): Հյուրասիրությունն անհրաժեշտ է կազմակերպել յուրաքանչյուր տաղավարի մոտ:

2.3 Տեսակցությունները դիտարկումներ կատարելու նպատակով Հանրապետական մարզադաշտերի տեսչությունը Հանրապետական մարզադաշտերի տեսչության պետ Ա.Ամիրյանի, Հանրապետական մարզադաշտերի տեսչության գլխավոր մասնագետ Ս.Ղազարյանի, Հանրապետական մարզադաշտերի տեսչության գլխավոր մասնագետ Ա.Ավետիսյանի, Հանրապետական մարզադաշտերի տեսչության գլխավոր մասնագետ Ա.Ալեքսանյանի մասնակցությամբ ստուգում է անցկացրել ԲՄ վարչության տարածքում գտնվող Հանրապետական մարզադաշտերի տեսչության գլխավոր մասնագետ Ա.Ալեքսանյանի կողմից ստուգման ենթարկվել է Հանրապետական մարզադաշտերի տեսչության գլխավոր մասնագետ Ս.Ղազարյանի կողմից ստուգման ենթարկվել է Հանրապետական մարզադաշտերի տեսչության գլխավոր մասնագետ Ա.Ավետիսյանի կողմից ստուգման ենթարկվել է Հանրապետական մարզադաշտերի տեսչության պետ Ա.Ամիրյանի կողմից ստուգման ենթարկվել է Հանրապետական մարզադաշտերի տեսչությունը ստուգումներ կատարելիս ստուգումներ կատարելիս ՀՀ մարզադաշտերի տեսչության գլխավոր մասնագետ Ս.Ղազարյանի, գլխավոր մասնագետ Ա.Ավետիսյանի, գլխավոր մասնագետ Ա.Ալեքսանյանի ներկայությամբ ՀՀ վարչության տարածքում գտնվող Հանրապետական

Հավելված N 2
« 11 » 06 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2020թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, մինչև 30-ը	Ընդամենը
1	79951100/3	միջոցառումների հետ կապված ծառայություններ								8200000	8200000	8200000	8200000	8200000	8200000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ Գ. Աղաբալյան
(ստորագրություն)
Կ.Տ

№ 47/20/0129

№ 09.06.20թ

Հավելված 5
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N _ Ե47Ի921___
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) և ԱՁ Գևորգ Աղաբալյանի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N<<ԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով <<ՎՏԲ – Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ն (ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան փ. 35, 68-73 ոչ բնակելի տարածքներ) (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 820.000 (ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.09.2020թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սպանդարյան մ/ճ կառավարիչ՝ Ս. Հակոբյան _____ 09.06.2020թ.

«ՎՏԲ-Հայաստան Բանկ»
ՓԲԸ, Մոսկովյան փ. 35,
68-73 ոչ բնակ. տարածք.
Երևան, 0002, Հայաստան

Միասնական տեղեկատվական ծառայություն
+(374 8000) 87-87
Ֆաքս՝ +(374 10) 56-55-78

E-mail:
headoffice@vtb.am
Կայք՝
www.vtb.am

№ 47/20/0128

№ 09.06.20թ

Հավելված 4
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N __Ե47Ի920____
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71»** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում Ա/Ձ Գևորգ Աղաբալյանի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովման (այսուհետ՝ երաշխավորված արտավորություններ):

2. Երաշխիքով Երաշխիքով <<ՎՏԲ – Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ն (ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան փ. 35, 68-73 ոչ բնակելի տարածքներ) (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 8.200.000 (ութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.09.2020թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/71 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սպանդարյան մ/ճ կառավարիչ՝ Ս. Հակոբյան _____ 09.06.2020թ

«ՎՏԲ-Հայաստան Բանկ»
ՓԲԸ, Մոսկովյան փ. 35,
68-73 ոչ բնակ. տարածք.
Երևան, 0002, Հայաստան

Միասնական տեղեկատվական ծառայություն՝
+(374 8000) 87-87
Ֆաքս՝ +(374 10) 56-55-78

E-mail:
headoffice@vtb.am
Կայք՝
www.vtb.am